ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

18.04.2024 Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում (զեկ.՝ Վ. Ա. Աղաբաբյան)։
2. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ Վ. Ա. Աղաբաբյան)։
3. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի անդամների առաջադրում (զեկ.՝ Վ. Ա. Աղաբաբյան)։
4. Հաղորդում 2-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ (զեկ.՝ Վ. Ա. Աղաբաբյան։
5. 2023-24 ուստարվա ուսումնական աշխատանքային պլանների հաստատում (զեկ.՝ Վ. Ա. Աղաբաբյան։
6. 2023-24 ուստարվա ավարտական կուրսերի մասնագիտական պրակտիկաների կազմակերպումից և իրականացումից ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների բավարարվածության ուսումնասիրության արդյունքների մասին (զեկ.՝ Վ. Ա. Աղաբաբյան։

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Ա. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուստարվա II կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփումը: Զեկուցողը նշեց, որ առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները իրականացվել է նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն: Արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում, տրվել համապատասխան գնահատականներ: Զեկուցողը մանրամասն ներկայացրեց ֆակուլտետում երկրորդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ընթացիկ ստուգումների ավարտին արձանագրված ակադեմիական պատկերը: Զեկուցողը փաստեց, որ ուսանողների կողմից բողոքարկումներ չեն եղել, գնահատականները սահմանված կարգով ներկայացվել են: Քննաշրջանի արդյունքները կից ներկայացված է Հավելված 1 և 2-ում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյան, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-24 ուստարվա երկրորդ կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ավարտական աշխատանքների նախապաշտպանության արդյունքները: Նա նշեց, որ ավարտական աշխատանք են իրականացնում «Դիզայն» կրթական ծրագրի IV կուրսի 11 ուսանող և «Դեկորատիվ կիրառական արվեստ» կրթական ծրագրի IV կուրսի 9 ուսանող: Թեմաները տրվել են սահմանված ժամանակում: Ուսումնական տարվա ընթացքում, ըստ սահմանված ժամանակացույցի, հանդիպումներ են եղել ավարտական աշխատանքների ղեկավարների հետ, ամբիոնում կազմակերպվել են քննարկումներ, դիտումներ: Զեկուցողը արձանագրեց, որ ուսանողները ներկայացրել են իրենց ավարտական

աշխատանքների էքիզները և կատարած գործը: Աշխաանքները բազմաժանր էին: Ղեկավար դասախոսները փաստեցին, որ աշխատանքները հիմնականում արված էին կիսով չափ, կային նախագծերում շտկումների անհրաժեշտություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ավարտական աշխատանքների ընթացիկ վիճակը գնահատել բավարար:

2. Ղեկավարներին հանձնարարել ավարտական աշխատանքները բերել վերջնական տեսքի մինչև մայիսի 4-ը ամբիոն ներկայացնել վերջնական տեսքով՝ գրախոսման ուղարկելու նպատակով:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 3-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ ղեկավարվելով «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով» /2017 թվականի նոյեմբերի 7-ի N 1282-Ն հրաման/, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով տվյալ հաստատության աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50%-ը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ: Զեկուցողը Կիրառական արվեստի ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն ներկայացրեց 2023-2024 ուստարվա «Դիզայն» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերի ավարտական կուրսի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը (Հավելված 3):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, Ա. Չիբուխչյանը, Դ. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2023-2024 ուստարվա Կիրառական արվեստի ֆակուլտետի «Դիզայն» և «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերիի ավարտական կուրսի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց 2023-2024 ուստարվա II կիսամյակի քննաշրջանի 2-րդ ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպման ընթացքը: Զեկուցողը ներկայացրեց, որ 2023-2024 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով /2-րդ ընթացիկ ստուգումները, քննություններն ու ստուգարքները՝ մայիսի 29-ից մինչև հունիսի 4-ը/, իսկ քննաշրջանը կանցկացվի հունիսի 11-ից հունիսի 29-ը/: Զեկուցողը նշեց, որ քննության օրերը քննարկվել են դասախոսական կազմի, ուսանողների հետ, երկար ժամանակ է փակցված են և առարկություններ չեն եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Դ. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-2024 ուստարվա II կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 5-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ ֆակուլտետում իրականացվող առկա ուսուցման կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերանայման համար ստեղծվել են աշխատանքային խմբեր, որոնք մշակել են 2024-28 ուստարվա վերանայված ուսումնական պլանները: Զեկուցողը նշեց, որ «Դիզայն» կրթական ծրագրի ուսումնական պլանում փոփոխություններ տեղի չեն ունեցել՝ հաշվի առնելով նախորդ տարի պլանի վերջնական տեսքի բերելը, իսկ «Դեկորատիվ-կիրառական արվեստ»» կրթական ծրագրի 2024-28 ուստարվա ուսպլաններում կատարվել է մի քանի փոփոխություններ՝ հաշվի առնելով 8-րդ կիսամյակում ավելացած նոր՝ լսարանային ժամերը, ուսանողական հարցումները, դասախոսի և ամբիոնի առաջարկները: «Զարդարվեստի ոճավորում» առարկայի անունը փոխվել է «Զարդարվեստի կոմպոզիցիա»: «Գործվածքի գեղարվեստական ձևավորում-4» մոդուլում կատարվել է թեմատիկ փոփոխություն և ուսուցանվող «Բատիկ»-ի փոխարեն կդասավանդվի «Գորգագործություն», իսկ «Բատիկը» ընդգրկվել է կամընտրական դասընթացների ցանկում: Կամընտրական դասընթացների ցանկում «Ապլիկացիա» դասընթացը փոխարինվել է «Ապակենկարչություն» դասընթացով: «Մանրանկարչություն» /6 կրեդիտ, 4 լսարանային ժամ/ և «Փայտի գեղարվեստական մշակում» /6 կրեդիտ, 4 լսարանային ժամ/ դասընթացները դարձել են երկու մոդուլ /Համապատասխանաբար՝ «Մանրանկարչություն-1» /3 կրեդիտ, 2 լսարանային ժամ/ և «ՀԲ Մանրանկարչություն-2» /6 կրեդիտ, 4 լսարանային ժամ/ և «Փայտի գեղարվեստական մշակում 1» /3 կրեդիտ, 2 լսարանային ժամ/, «Փայտի գեղարվեստական մշակում 2» /3 կրեդիտ, 2 լսարանային ժամ/: Հաշվի առնելով 8-րդ կիսամյակում լսարանային ժամերի առկայությունը՝ «Մետաղի գեղարվեստական

մշակում-1» դասընթացը 5-րդ կիսամյակից տեղափոխվեց 6-րդ, իսկ «Մետաղի գեղարվեստական մշակում-2» դասընթացը՝ 7-րդ կիսամյակ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Դ. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Հաստատել «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերի 2024-28 ուսումնական պլանները:

2. «Դեկորատիվ-կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերի ուսպլանում կատարված փոփոխությունները ներկայացնել ՈՒՄՎ:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի 6-րդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը նշեց, որ պրակտիկաներն անփոխարինելի հնարավորություն են ուսումնառության ընթացքում ձեռք բերած գիտելիքների փորձարկման, մասնագիտական հմտությունների ստուգման, դրանք կատարելագործելու տեսանկյունից: Ավարտական կուրսերի ուսանողների համար պրակտիկան հնարավորություն է տալիս ճշտելու և պլանավորելու ավարտական աշխատանքի բովանդակությունը, հավաքագրել անհրաժեշտ տվյալներ, այն ստեղծում է նախադրյալներ նաև հետբուհական հետագա կրթության համար:

Զեկուցողը նշեց, որ Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինն իր գործառույթների շրջանակներում համագործակցելով Պրակտիկաների կազմակերպման և շահակիցների հետ համագործակցության (ՊԿՇՀ) բաժնի հետ 2024թ.-ի մարտին իրականացրել է 2023-24 ուստարվա 2-րդ կիսամյակի սկզբում մասնագիտական պրակտիկա անցած ուսանողների «Պրակտիկաների կազմակերպումից և իրականացումից բավարարվածության» ուսումնասիրություն հարցման միջոցով: Հարցումներն իրականացվել են պրակտիկաների համար նախատեսված ստուգարքների օրերին՝ թղթային տարբերակով: Բաժնի աշխատակիցները ստուգարքից հետո բոլոր ուսանողներին հանձնել են անանուն հարցաթերթեր, նրանց տրամադրելով ժամանակ և հնարավորություն հարցաթերթին ազատ

և անկաշկանդ պատասխանելու համար: Զեկուցողը նշեց, որ հարցմանը մասնակցել են պրակտիկա անցած առկա ուսուցման «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրերի 9-ը և «Դիզայն» կրթական ծրագրի 12 ուսանող (100%-ը), որը շատ բարձր ցուցանիշ է: Կարևորվեց նաև այն, որ ուսանողները բավականին լրջությամբ են մոտեցել գործընթացին և լրացրել են հարցաթերթը՝ անդրադառնալով հարցաթերթի բոլոր հարցերին (4 բաց և 7 գնահատականով հարցեր):

Իրականացված հարցումը նպատակ ուներ պարզելու ուսանողների բավարարվածությունը պրակտիկայի կազմակերպումից և իրականացումից ընդհանրապես և մասնավորապես նրանց բավարարվածությունը պրակտիկաների անցկացման վայրից, անցկացման ժամանակահատվածից, տևողությունից, պրակտիկայի ծրագրից, ընդունող կազմակերպության կամ ձեռնարկության աջակցությունից, բուհի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավարի աշխատանքից, վեր հանել պրակտիկայի հետ կապված խնդիրները, հավաքագրել ուսանողների կարծիքները հանդիպած խոչընդոտների և խնդիրների վերաբերյալ, առաջարկությունները՝ իրենց նշած խնդիրների լուծման և պրակտիկայի գործընթացի բարելավման վերաբերյալ:

Գնահատականով հարցերն ամփոփվել են ինչպես միջին միավորով (ըստ գնահատման 5- բալանոց համակարգի), այնպես էլ բացարձակ թվերով՝ ըստ գնահատականների, նաև տոկոսներով՝ ընդհանուր քանակությունների հետ համեմատած:

Ուրախությամբ փաստենք, որ վերջին տարիներին պրակտիկաների հետ կապված գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացմանն ուղղված քայլերի արդյունքում էապես բարձրացել է պրակտիկաներից ուսանողների բավարարվածության մակարդակը: Ըստ դիտարկված գրեթե բոլոր հարցերի միջին միավորները գերազանցել են 4.5 միավորը (Հավելված 5):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-24 ուստարվա ավարտական կուրսերի մասնագիտական պրակտիկաների կազմակերպումից և իրականացումից ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների բավարարվածության ուսումնասիրության արդյունքների մասին հարցման արդյունքներն ընդունել ի գիտություն:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հավելված1

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Կիրառական արվեստի ֆակուլտետ

2023-2024 ուս.տարի II կիսամյակ

Առաջադիմությունը

16/04/2024

ընթ.քնն.1

N:	Առարկայի անունը	Ուս.քանակը		Միջին գնահ.		0-ների քանակը		2,3-ների քան.		4,5-երի քան.	
		ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.
	Դիզայն (գեղար)										
	Կուրս Դ I										
1	Կոմպոզիցիա հիմ.	17	2	3.06	4.00	1		10		6	2
2	Նկարչություն -2	17	2	2.71	4.00	3		8		6	2
3	Բիոնիկա և արխիտեկտոնիկա	17	2	3.12	4.00	1		8		8	2
	Կուրս Դ II										
1	Արվեստի պատմություն-2	6	2	3.00	3.50			4	1	2	1
2	Նկարչություն 4	6	2	3.50	4.00			3		3	2
3	Համակ.գրաֆիկա և եռաչափ մոդ.-2	6	2	3.17	4.00			1		4	2
4	Բիոնիկա և արխիտեկտոնիկա	6	2	3.50	4.00			3		3	2
5	Քանդակագործություն	6	2	3.33	4.00			3		3	2
	Կուրս Դ III										
1	Գծանկարչություն-6	7	2	4.29	5.00			2		5	2
2	Դիզայն նախագծում-2	7	2	3.43	4.00			3		4	2
	Ընդամենը՝ Դիզայն (գեղար)			*3.20*	*4.05*						
	Կիրառական արվեստ										
	Կուրս ԿԱI										
1	Նյութերի տեխ.	13	3	2.69	4.00	1		8		4	3
2	Նկարչություն--2	13	3	3.46	3.67	1		3	1	9	2
3	Քանդակագործություն	13	3	2.46	3.67	1		7	1	3	2
4	Գործ.գեղ.ձևավորում-1	13	3	3.08	3.67			8	1	5	2
	Կուրս ԿԱII										
1	Արվեստի պատմ.-2	7	3	2.71	3.33			6	2	1	1
2	Քանդակ և պլաստիկ մոդ.	7	3	3.71	4.00			2		5	3
3	Նկարչություն-4	7	3	3.00	4.00	1		3		3	3
	Կուրս ԿԱIII										
1	Գործ. գեղ.ձևավորում-5	8	3	4.63	4.67					8	2
2	Գծանկարչություն6	8	3	4.13	4.67			2		6	2
3	Մաներանկարչություն-1	8	3	4.50	4.67					8	2
	Ընդամենը՝ Կիրառական արվե			*3.34*	*4.03*						
	Ընդամենը ֆակուլտետում՝			3.27	4.04						

Դեկան՝ Վ. Ա. Աղաբաբյան

Հավելված 2

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Կիրառական արվեստի ֆակուլտետ

2023-2024 ուս.տարի II կիսամյակ

Առաջադիմությունը

ընթ.ստ.1 16/04/2024

N:	Առարկայի անունը	Ուս.քանակը		Միջին գնահ.		0-ների քանակը		6,7,8-երի քան.		9,10-երի քան.	
		ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.	ընդհ.	անվճ.
	Դիզայն (գեղար)										
	Կուրս Դ III										
1	Եռաչափ մոդ.-3	7	2	8.14	10.00			2		4	2
2	Գունանկարչություն-6	7	2	7.86	9.00			3		4	2
	Ընդամենը՝ Դիզայն (գեղար)			*8.00*	*9.50*						
	Կիրառական արվեստ										
	Կուրս ԿԱII										
1	Քանդակ և պլաստիկ մոդ.	7	3								
	Կուրս ԿԱIII										
1	Մետաղի գեղ. մշակում2	8	3	8.88	9.00			1		7	3
2	Խեցեգործություն-1	8	3	9.25	9.33			1		7	1
3	Ապակենկարչություն	8	3	9.50	9.67					8	2
4	Գունանկարչություն-6	8	3	8.25	9.33			3		5	1
	Ընդամենը՝ Կիրառական արվե			*7.36*	*7.47*						
	Ընդամենը ֆակուլտետում՝			7.53	7.89						

Դեկան՝ Վ. Ա. Աղաբաբյան

Հավելված 3

«ԴԻԶԱՅՆ» ԵՎ «ԴԵԿՈՐԱՏԻՎ-ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ 2024Թ. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Բաբյան Մարիա Իոսիֆի- նախագահ, ՀԳՊԱ «Դեկորատիվ-կիրառական արվեստի» ամբիոնի վարիչ, դոցենտ
2. Աղբալյան Նունե Յուրիի- անդամ, , ՀԳՊԱ Դիզայնի և դեկորատիվ-կիրառական արվեստի ֆակուլտետի, «Համակարգչային գրաֆիկայի և հագուստի մոդելավորման» ամբիոնի պրոֆեսոր
3. Ասատրյան Համլետ Միհրդատի - անդամ, «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչի պաշտոնակատար,դոցենտ
4. Մելքումյան Միսակ Ստյոպայի - «Դեկորատիվ-կիրառական արվեստ և դիզայն» ամբիոնի դասախոս, Տավուշի մարզի գլխավոր ճարտարապետ
5. Ղալումյան Լիլիթ Ռոբերտի – անդամ, Իջևանի քաղաքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ

Հավելված 4



Բաց հարցերում գերակշռել են դրական կարծիքներ, իսկ լուրջ և անհաղթահարելի խնդիրներ (ըստ ուսանողների) գրեթե չեն եղել, և նրանք լիահույս են, որ պրակտիկան իսկապես կատարել է իր դերը, նպաստել է նրանց մասնագիտական և անձնային որակների բարձրացմանը:

Ներկայացված միջին ցուցանիշները փաստում են, որ ուսանողները գոհ են եղել պրակտիկայի կազմակերպման աշխատանքներից, պրակտիկայի իրենց ղեկավարների աշխատանքից, ընդունող կազմակերպության կամ ձեռնարկության աջակցությունից, ընդորում այս ցուցանիշներն էապես բարձր են նախորդ ուսումնասիրությունների արդյունքներից:







Իսկ ահա պրակտիկայի տևողության, անցկացման ժամանակահատվածի և վայրի հետ կապված հարցերը ուսանողների կողմից միշտ բարձրաձայնվել են, այս պրակտիկայի շրջանակներում նույնպես դրանք նշվել են: Բայց այստեղ պետք է նշել, որ պրակտիկաներն իրականացվում են ըստ ուսումնական պլանների, որոնք պարբերաբար վերանայվում են և հնարավորության դեպքում տրվում են համապատասխան հնարավոր լուծումներ:

Ներքևի աղյուսակում բերված տվյալները ցույց են տալիս, որ պրակտիկայի անցկացման վայրից բավարարվածության համեմատաբար ցածր միջին միավորներ ունենք հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Անգլերեն լեզու և գրականություն» (ԱԼԳ), «Ֆրանսերեն լեզու և գրականություն» (ՖԼԳ), «Պատմություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» (ՏՄՄ) կրթական ծրագրերի ուսանողների կողմից: Մասնավորապես, ՖԼԳ կրթական ծրագրի բոլոր 4 ուսանողները պրակտիկայի բարելավման վերաբերյալ բաց հարցերում միանշանակ առաջարկում են փոխել պրակտիկայի անցկացման վայրը, որպեսզի այն տա մասնագիտական փորձ և լինի արդյունավետ: Անցկացման վայրի հետ կապված շեշտել են նաև Կիրառական արվեստի ֆակուլտետի «Դիզայն» կրթական ծրագրի 12 ուսանողներից 4-ը:

Կրթական ծրագիր	Բավարարվածությունը պրակտիկայի.		
	անցկացման վայրից	անցկացման ժամանակահատվածից	տևողությունից
ԱԼԳ /20	4.35	4.25	4.25
ՖԼԳ /6	4.00	5.00	5.00
ՌԼԳ /6	5.00	4.67	4.33
ՀԼԳ /13	4.69	4.62	4.85
Պատմություն /13	4.31	4.62	4.62
Հոգեբանություն /11	4.45	4.27	3.91
ՏՄՄ /17	4.38	4.56	4.47
ԻԿՄ /17	4.76	4.76	4.76
Ֆինանսեր /21	4.95	4.38	4.19
Զբոսաշրջություն /12	4.92	4.58	4.83
ԴԿԱ /9	4.44	4.11	4.44
Դիզ /12	4.00	4.50	4.50

Պրակտիկայի անցկացման ժամանակահատվածից բավարարված չեն ԱԼԳ, Հոգեբանություն, Ֆինանսներ և ԴԿԱ կրթական ծրագրերի ուսանողները, ընդ որում բաց հարցում ժամանակահատվածի անհարմարության վերաբերյալ հիմնավորումներ կամ փոխելու վերաբերյալ առաջարկներ չեն նշվել:

Իսկ ահա պրակտիկայի տևողության ավելացման վերաբերյալ առանձնահատուկ նշել են հետևյալ կրթական ծրագրերի ուսանողները. ՌԼԳ (6 ուսանողներից 4-ը), Ֆինանսներ (21 ուսանողներից 11-ը), ԴԿԱ (9 ուսանողներից 7-ը):



Այժմ անդրադառնանք հարցաթերթի բաց հարցերին, դրանց պատասխաններին և վերլուծությանը:

Հարց 1. Որքանո՞վ են ձեր ստացած գիտելիքները բավարարել մասնագիտական պրակտիկայի իրականացման ընթացքում:

Այս հարցին գրեթե բոլոր կրթական ծրագրերի պրակտիկանտ-ուսանողները տվել են դրական գնահատականներ՝ նշելով, որ մասնաճյուղում ստացած իրենց գիտելիքները բավարարել են մասնագիտական պրակտիկայի ժամանակ անհրաժեշտ առաջադրանքները և աշխատանքները կատարելու համար: Ստացած գիտելիքները հիմնավորվել են ուսանողների վստահությամբ, իրավիճակային խնդիրների լուծման կարողությամբ և ազատ դրսևորման հմտությամբ: Ուսանողներից շատերը փաստել են, որ պրակտիկան բարձրացրել է իրենց վստահությունը մասնագիտական կարողությունների հանդեպ, մեծացրել է սերը և հետաքրքրությունը դեպի մասնագիտությունը:

Հարց 2. Ի՞նչ տվեց Ձեզ մասնագիտական պրակտիկան:

Այստեղ ուրախությամբ պետք է նշել, որ բոլոր կրթական ծրագրերի ուսանողները գոհունակությամբ նշել են այն ամենի մասին, ինչ տվել է իրենց պրակտիկան: Նրանք նշել են, որ մասնագիտական պրակտիկան իրենց տվել է մասնագիտական փորձ, նոր գիտելիքներ, տեսական գիտելիքները գործնականում կիրառելու և սեփական կարողություններն ու ներուժը բացահայտելու հնարավորություն, խնդրահարույց իրավիճակներում լուծումներ գտնելու և արագ կողմնորոշվելու ունակություններ:

Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները փաստել են, որ պրակտիկան համատեղել են ավարտական աշխատանքի իրականացման հետ, իսկ ամենակարևորը, պրակտիկայի ընթացքում սովորել են աշխատել թիմում և պատվիրատուի հետ:

Հարց 3. Ի՞նչ խնդիրների եք հանդիպել պրակտիկայի ընթացքում:

Այս հարցի առաջադրումը նպատակ էր հետապնդում վեր հանելու պրակտիկայի կազմակերպման և իրականացման հետ կապված խնդիրները, սակայն արդյունքները ցույց տվեցին, որ պրակտիկայի հետ կապված հարցում մասնաճյուղն ունի տեսանելի ձեռքբերումներ, որովհետև ուսանողները պրակտիկայի ընթացքում կազմակերպական և իրականացման ոչ մի խնդրի հիմնականում չեն հանդիպել, ամեն ինչ անցել է հարթ, սահուն, պլանավորված, ուսանողները նշել են, որ հաճույքով են գնացել պրակտիկայի վայրեր և մեծ նվիրումով և ոգևորությամբ կատարել իրենց հանձնարարություններն ու առաջադրանքները, իսկ հանդիպած նեղ մասնագիտական խնդիրները հիմնականում լուծվել և հաղթահարվել են ղեկավարների և կցված մասնագետների կողմից:

Հարց 4. Ի՞նչ կփոխեիք պրակտիկայի իրականացման գործընթացում:

Ներկայացնենք ուսանողների կողմից պրակտիկայի կազմակերպման և իրականացման գործընթացում առաջարկվող փոփոխությունները: Ինչպես նշել ենք վերևում, ուսանողների առաջարկները հիմնականում կապված են պրակտիկայի անցկացման վայրի, ժամանակահատվածի և տևողության հետ:

Դիզայն կրթական ծրագրի ուսանողներն առաջարկում են փոխել պրակտիկայի վայրը, կամ ներգրավել այլ կազմակերպություններ և երկարաձգել տևողությունը:

Ամփոփելով հարցման արդյունքները վստահաբար կարող ենք նշել, որ պրակտիկայի կազմակերպման և իրականացման գործընթացը մասնաճյուղում հաջողված է: